



48. ԿԱՄ ԵՍ, ԿԱՄ ՉՈՄԱՐ

Հարուստ մարդ մե մեռեր էր, տերտեր պատարագ պտի էներ. ժամ էրթրուց չառեջ կէրթա միս կառնե, օշխրրի մե ճուռ ձեռ առած տուն գիկեր, ռեսի շուն՝ Չոմար, չետեանց կը դարկե, դճուռ կը թըռցու ձեռքեն, կը փախնի:

Տերտեր կը խոռվի գիկա նստի տուն, ուր տեղեն ժած չիգա:

Ժողովուրդ լցվեր էր ժամ. կիշկին օր տերտեր գա, տերտեր չկա: Պատարագի տեր կէրթա մըտ տերտեր:

— Տե՛րտեր,— կըսե,— ժողովուրդ չըմեն լցուկ ին ժամ, քըզի կիշկին, յանգան է, ահագին հաց ու զատ ինք էրի, փշացավ, կէրթա կորի, չե՛լի էրթանք ժամ:

— Չէ՛ օր չէ՛, ես ժամ գալացող չիմ, Չոմար իմ ձեռքեն միս թոցու տանե, ու ես ժամ գա՛մ, չէղած բան է:

— Տե՛րտեր, քու բախտն ինք չընկի, էդ հմալ բան մ՛էնի, չե՛լի ժամ էրթանք, հալվան է ու միս փախցուցեր է, ի՛նչ էնինք:

— Չէ՛ օր չէ՛, կամ Չոմար կը մնա գեղ, կամ՝ ես:

էլ չընք գինա՝ Չոմա՛ր մնաց գեղ, թե՛ տերտեր:

